ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Հայտնում ենք, որ 2019 թվականի հունիսի 13-ին կայացել է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը, որի արդյունքում հաղթող չի ճանաչվել և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ա որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգի 28-րդ կետի դրույթների՝ կայացվել է որոշում նոր մրցույթ հայտարարելու մասին:

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 13-ին տեղի ունեցած նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի ներկայացուցչի եզրակացությունը:

Առդիր՝ 4 էջ:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց»
ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝

Ա. Ստամբոլցյան

17.06.2019թ.

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 09717-19
17. 06. 19

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2019 թվականի հունիսի 13-ին, ժամը 14^{00}-ին կայացավ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի /այսուհետև՝ Խորհուրդ/ նիստը:

Մասնակցում էին Խորհրդի նախագահ Ա. Ստամբոլցյանը, անդամներ՝ Ա. Մաղաքյանը, Լ. Հովհաննիսյանը, Ա. Տոնոյանը, Ս. Գուլյանը, Ա. Դանիելյանը, Թ. Հովհաննիսյանը,

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչ Ա. Վարդանյանը:

Նիստին բացակայում էր՝ Վ. Մխիթարյանը:

Օրակարգում – ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրություն:

Խորհրդի նախագահ Ա. Ստամբոլցյանը հայտնեց, որ տնօրենի ընտրությունն անցկացվում է ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգի» /այսուհետև՝ Կարգ/ դրույթներին համապատասխան: Նիստն իրավազոր է, նիստին մասնակցում է նախարարության ներկայացուցիչը: Հայտնեց, որ մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել Սիլվա Սուրենի Սահակյանը և Լուսինե Հենրիկի Մելիքյանը: Սակայն հավակնորդ Լուսինե Մելիքյանը սահմանված ժամին չէր ներկայացել և խորհրդի նախագահը առաջարկեց հավակնորդին սպասել ևս 10 րոպե: Առաջարկությունը դրվեց բաց քվեարկության և նիստին մասնակից խորհրդի բոլոր անդամները «կողմ» քվեարկեցին ներկայացված առաջարկությանը: Սակայն 10 րոպե հետո ևս հավակնորդ Լ. Մելիքյանը չներկայացավ մրցույթին: Նախագահը առաջարկեց ամրագրել, որ քանի որ հավակնորդ Լ. Մելիքյանը չի ներկայացել մրցույթին, ապա մրցույթն անցկացվում է 1 /մեկ/ հավակնորդի՝ Սիլվա Սահակյանի մասնակցությամբ:

Հավակնորդը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, ունի բարձրագույն կրթություն, ուսումնական հաստատության կառավարման իրավունք /հավաստագիր/, հավակնորդը ներկայացրել է դիմում Խորհրդի նախագահի անունով, ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը, հավաստագրի պատճենը, աշխատանքային գրքույկի պատճենը, ՀՀ Շիրակի մարզի « Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման ծրագիրը: Նկատի ունենալով, որ տնօրենի հավակնորդը բավարարում է Կարգի 9-րդ կետով սահմանված մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններին, ներկայացրել է Կարգի 10-րդ կետով պահանջվող փաստաթղթերը, որոշվեց թույլատրել Ս. Սահակյանին մասնակցելու ՀՀ Շիրակի

մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթին:

Սիլվա Սահակյանը բանավոր ներկայացրեց դպրոցի զարգացման իր ծրագիրը: Նա պատասխանեց ծրագրի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից տրված հարցերին:

Կարգի 26-րդ կետի համաձայն անցկացվեց տնօրենի ընտրություն՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեաթերթիկները ստորագրվեցին Խորհրդի՝ նիստին մասնակից բոլոր 7 անդամների կողմից, կնքվեցին ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կնիքով: Քվեաթերթիկները բաժանվեցին Խորհրդի անդամներին: Բացակա անդամի քվեաթերթիկը մարվեց սահմանված կարգով:

Խորհրդի անդամները հերթականությամբ մոտեցան սենյակի անկյունում առանձին դրված քվեատուփին, քվեաթերթիկում համապատասխան նշում կատարելուց հետո, քվեաթերթիկը գցեցին քվեատուփի մեջ:

Քվեարկության ավարտից հետո, Խորհրդի նախագահը քվեատուփից հերթականությամբ հանեց քվեաթերթիկները և հայտարարեց քվեարկության արդյունքները:

Պարզվեց, որ Սիլվա Սուրենի Սահակյանը ստացել է 1 /մեկ/ կողմ, 4 /չորս/ դեմ ձայն, 2 /երկու/ չքվեարկված քվեաթերթիկ :

Քվեաթերթիկները ծրարվեցին և կցվեցին արձանագրությանը:

Խորհրդի նախագահի կողմից առաջարկվեց հաստատել քվեարկության արդյունքները:

Խորհուրդը 1 /մեկ/ կողմ, 4 /չորս/ դեմ ձայնով որոշեց հաստատել քվեարկության արդյունքները:

Խորհրդի նախագահը հավակնորդի ներկայությամբ հրապարակեց քվեարկության արդյունքները:

Արդյունքների ամփոփումից հետո խորհրդի նախագահը ներկայացրեց, որ կարգի 28-րդ կետի համաձայն եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ հավակնորդ և մրցույթում հաղթող չի ճանաչվել, ապա կրկնակի քվեարկություն չի անցկացվում և, սույն կարգի համաձայն, հայտարարվում է նոր մրցույթ: Նախագահը առաջարկեց քվեարկության դնել նոր մրցույթ հայտարարելու մասին որոշման ընդունումը, որն ընդունվեց 7 /յոթ/ կողմ ձայնով:

Հիմք ընդունելով Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, 26-րդ, 28-րդ կետերով սահմանված դրույթները, Խորհուրդը 7 /յոթ/ կողմ ձայնով.

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացված մրցույթում հաղթող չճանաչել և տնօրեն չընտրել:

2. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարել նոր մրցույթ.

ա/ մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ 2019 թվականի օգոստոսի 14-ին, ժամը 14^{00}- ին,

բ/ մրցույթի մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 5 հիմնական դպրոցում՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 07.07.2019թ.– 05.08.2019թ. ժամանակահատվածում՝ ժամը 10^{00}-15^{00}, բացի ոչ աշխատանքային օրերից,

գ/ մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին,

դ/ մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտի պետական լիազորված մարմնին,

ե/ ԶԼՄ-ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 02.07.2019թ. -ին, երկրորդը՝ 07.07.2019թ.-ին,

զ/ մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահ Ա. Ստամբոլցյանի վրա:

Նախագահ՝ Ա. Ստամբոլցյան

Քարտուղար՝ Ա. Տոնոյան

17.06.2019թ.

Եզրակացություն

ՀՀ ԿԳ նախարարի 11.06.2019թ. N 40-Ա հրամանի համաձայն 2019թ. հունիսի 13-ին ժամը 14:00-ին, որպես ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ, մասնակցել եմ ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու N 5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին:

Մրցույթին մասնակցելու համար դիմել էին 2 հավակնորդ՝ Լուսինե Հենրիկի Մելիքյան և Սիլվա Սուրենի Սահակյանը:

Նիստին մասնակցում էին կառավարման խորհրդի 8 անդամներից 7-ը, բացակա 1-ը՝ Վաղարշակ Արամայիսի Մխիթարյանը:

Հավակնորդներից մեկը՝ Լուսինե Հենրիկի Մելիքյանը, չմասնակցեց մրցույթին, իսկ մյուս հավակնորդը՝ Սիլվա Սուրենի Սահակյանը, ներկայացրեց տվյալ հաստատության զարգացման իր ծրագիրը և պատասխանեց զարգացման ծրագրի վերաբերյալ խորհրդի անդամների կողմից տրված հարցերին: Այնուհետև տեղի ունեցավ փակ քվեարկություն, որի արդյունքում Սիլվա Սահակյանը ստացավ 1 <<կողմ>> և 4 <<դեմ>> ձայն, իսկ երկու քվեաթերթիկ համարվեց անվավեր: Խորհրդի նախագահը քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո, մինչև նիստի ավարտը հավակնորդի ներկայությամբ հրապարակեց քվեարկության արդյունքները: Քվեարկության արդյունքով տնօրեն չընտրվեց և տնօրենի ընտրության /նշանակման/ կարգի 28-րդ կետի համաձայն հայտարարվելու է նոր մրցույթ:

ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու N 5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթն անցկացվեց Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. N319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգի>> պահանջներին համապատասխան:

ՀՀ կրթության և գիտության
Նախարարության ներկայացուցիչ՝ Ա. Վարդանյան